ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Three4ResilientArmenia: Կայուն կենսամիջոցների, ձեռնարկատիրության զարգացման և զբաղվածության հնարավորությունների խթանում տեղահանվածների և հյուրընկալող համայնքների համար

Իրականացման ժամանակահատված: 12.11.2024 - 12.11.2027

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 3 000 000

Ընդհանուր բյուջե: € 3 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

“Armenian Caritas” Benevolent NGO, “Impact Hub Armenia” Social Innovation Development Foundation, “IRIS Business Incubator” Foundation

Նախագծի նկարագրություն:

«Three4ResilientArmenia» ծրագիրը նպատակ ունի նպաստել Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և ընդունող համայնքների սոցիալական համախմբմանն ու տնտեսական ինտեգրմանը՝ ապահովելով կայուն և կենսունակ լուծումներ զբաղվածության, ձեռնարկատիրության, բնակարանային ապահովման և սոցիալական ներառման ոլորտներում:

•Ծրագրի խնդիրներն են՝ խթանել տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների կյանքի որակի բարելավումը և ավելի լայն ներգրավվածությունը ձեռներեցության ոլորտում:

•Ծրագրի շահառուներն են Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք և պատերազմից կամ ջրհեղեղից տուժած տեղացի ընտանիքները, ինչպես նաև աշխատանք փնտրողները, սկսնակ և գործող ինքնազբաղվածները, ՓՄՁ-ները և ստեղծարար ոլորտներում ներգրավված անձիք

•Ծրագրի աշխարհագրական ընդգրկվածությունը. ՀՀ ողջ տարածք – ձեռնարկատիրության աջակցության բաղադրիչներ (իրականացվում է «Իրիս Բիզնես Ինկուբատոր» հիմնադրամի և «Իմփաքթ Հաբ Արմենիա» սոցիալական նորարարության զարգացման հիմնադրամի կողմից); Արարատի, Գեղարքունիքի մարզեր և Երևան (հարակից համայնքներով) – NEXUS բաղադրիչ (կացարանի, զբաղվածության աջակցություն և սոցիալական ինտեգրում) (իրականացվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից)

Ակնկալվող արդյունքներ:

•NEXUS բաղադրիչ՝ 100 անձ կմասնակցի զբաղվածության աջակցության ամբողջական շղթային՝ կարիերայի կողմնորոշում, մասնագիտացման և փափուկ հմտությունների դասընթացներ և մասնագիտական գործիքների տրամադրում: 100 անձ գյուղատնտեսական ոլորտից կստանա կենսապայմանների բարելավման աջակցություն՝ ներառյալ բիզնես խորհրդատվություն, ոլորտային մենթորինգ, տեխնիկա/սարքավորումներ կամ կենդանիներ: 100 ընտանիք կստանա բնակարանային աջակցություն՝ վերանորոգման կամ վարձավճարի մասնակի փոխհատուցման միջոցով: Կկազմակերպվեն սոցիալականացման միջոցառումներ՝ 100 մասնակիցներով, ինտեգրման նպատակով:

•Ձեռնարկատիրության զարգացման բաղադրիչ՝ 380 երիտասարդ ձեռներեց կներգրավվի տարածաշրջանային և ազգային Գաղափարատոներում, 320 ինքնազբաղված անձ/ստարտափ կստանա բիզնես մոդելի ձևակերպման աջակցություն, 200-ը կմասնակցի Բիզնես ակադեմիային: 100 ինքնազբաղված անձ և ստարտափ կստանա դրամաշնորհ, 25 բիզնես կստանա զարգացմանն ուղղված ֆինանսավորում, 30 ձեռներեց կներգրավվի նախաակսելերացիոն, 8-ը՝ ակսելերացիոն ծրագրերում: 2 ստեղծարար կենտրոն կզարգանա որպես կայուն սոցիալական ձեռնարկություն: 3 ցանցային (networking) միջոցառում՝ 360 տեղահանված և տեղացի ստեղծարարների մասնակցությամբ:

•Շահերի պաշտպանություն և համակարգերի բարելավում՝ ՀՀ պետական կառույցների կարողությունների հզորացում: «Սոցիալական ինտեգրման հայաստանյան ՀԿ ֆորում» հարթակի արդյունավետ գործունեություն: